ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 19

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

26.11.2016թ. ք. Իջևան

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 35 անդամներից 32-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ս. Ա. Առաքելյանը:

Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Տեղեկատվություն 2016թ. ԵՊՀ ԻՄ-ի բակալավրիատի ընդունելության արդյունքների մասին:

   Զեկուցող՝ տնօրեն Ս.Ա. Առաքելյան

2. ԵՊՀ ԻՄ-ի 2016թ. ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունների քննարկում:

   Զեկուցող՝ տնօրեն Ս.Ա. Առաքելյան

3. ԵՊՀ ԻՄ-ի արտաքին շահեկիցների 2016թ. կարծիքների ուսումնասիրությունը շրջանավարտների վերաբերյալ:

   Զեկուցող՝ տնօրեն Ս.Ա. Առաքելյան

4. ԵՊՀ ԻՄ-ի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

   Զեկուցող՝ տնօրեն Ս.Ա. Առաքելյան

5. ԵՊՀ ԻՄ-ի դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականության հաստատումը:

   Զեկուցող՝ տնօրեն Ս.Ա. Առաքելյան

6. Ընթացիկ հարցեր

- ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ Վաչիկ Բրուտյանի ‹‹Իրավաբանական մանկավարժությունը Հայաստանի Հանրապետության իրավապահպան համակարգում›› մենագրությունը հրատարակության երաշխավորելու մասին:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց, և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

<u>Օրակարգի առաջին՝</u> Տեղեկատվություն 2016թ. ԵՊՀ ԻՄ-ի բակալավրիատի ընդունելության արդյունքների մասին հարցի վերաբերյալ լսեցին տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Նա նշեց, որ 2016 թ.-ին ԵՊՀ ԻՄ-ի դիմորդների ընդհանուր թիվը, ըստ առաջին և երկրորդ հայտերի առկա ուսուցմամբ եղել է 228 հոգի (2015թ.-ին եղել է 208 հոգի), որից 197 հոգի ստացել է դրական գնահատական (2015թ-ին՝ 168 հոգի), իսկ հեռակա ուսուցմամբ 205 հոգի: Այս թվերը վկայում են այն մասին, որ աճել է ԵՊՀ ԻՄ–ի նկատմամբ

հասարակության վստահությունը, ինչպես նաև աճել է առավել պատրաստված դիմորդների քանակը:

Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը մանրամասն աղյուսակային տեսքով ներկայացրեց 2016 թ.-ի ԵՊՀ ԻՄ-ի դիմորդների շարժը առկա և հեռակա ուսուցմամբ (Հավելված 1): Նա նշեց, որ գրանցված արդյունքները բավարար են 2016թ-ի համար, համապատասխան ստորաբաժանումները պետք է աշխատեն առավել ակտիվ 2017թ. պոտենցիալ դիմորդների հետ, առավելագույն քանակով դիմորդներ ԵՊՀ ԻՄ ներգրավելու համար:

Արտահայտվեցին – ՄԿՊԿ բաժնի վարիչ Վ. Աղաբաբյանը, հեռակա ուսուցման բաժնի վարիչ Մ. Զուրաբյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ վերլուծությունները վկայում են, որ տարածաշրջանից ԵՊՀ դիմել են միայն այն մասնագիտություններով, որոնք չկան ԵՊՀ ԻՄ–ում, և չնայած այն հանգամանքին, որ 2016թ. ԵՊՀ ԻՄ–ի դիմորդների քանակը բավարար է եղել, 2017թ.-ը այս առումով դժվար է լինելու, պետք է ներդնենք մեր բուհի բոլոր ռեսուրսները այս գործընթացը առավել արդյունավետ կազմակերպելու համար:

Որոշեցին

Որոշում 19/1

Ընդունել ի գիտություն:

<u>Օրակարգի երկրորդ՝</u> ԵՊՀ ԻՄ-ի 2016թ. ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունների քննարկում հարցի վերաբերյալ լսեցին տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Հաղորդումը ներկայացվում է ամբողջությամբ (Հավելված 2):

Որոշեցին

Որոշում 19/2

Ընդունել ի գիտություն:

<u>Օրակարգի երրորդ</u> ՝ ԵՊՀ ԻՄ-ի արտաքին շահեկիցների 2016թ. կարծիքների ուսումնասիրությունը շրջանավարտների վերաբերյալ հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Ելույթը ամբողջությամբ ներկայացվում է հավելված 3-ում:

Որոշեցին

Որոշում 19/3

Ընդունել ի գիտություն:

<u>Օրակարգի չորրորդ</u> ՝ ԵՊՀ ԻՄ-ի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Նա նշեց, որ առաջարկվող փոփոխությունները պայմանավորված են ԵՊՀ–ի համապատասխան կանոնակարգում կատարված փոփոխություններով: Առաջարկվում է «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգում» (հաստատված ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի **2016թ. ապրիլի 2-ի թիվ 15 նիստում**) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

- Ուժը կորցրած ճանաչել Կանոնակարգի 11.6-րդ կետը:
- Կանոնակարգը լրացնել 36-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

«36. Երևանի պետական համալսարանն իր ֆինանսական միջոցների հաշվին յուրաքանչյուր կիսամյակ սահմանում է միանվագ համալսարանական կրթաթոշակ:

Միանվագ համալսարանական կրթաթոշակը նշանակվում է բակալավրիատի և մագիստրատուրայի առավել բարձր առաջադիմություն (ՄՈԳ-ը բակալավրիատում բարձր է 18.00-ից, մագիստրատուրայում՝ 19.00-ից) ունեցող և հասարակական ակտիվ դիրքորոշում ու պատշաճ վարքագիծ դրսևորած ուսանողներին: Հասարակական ակտիվ դիրքորոշումն ու պատշաճ վարքագիծը բնութագրվում է սույն կանոնակարգի 24-25-րդ կետերում սահմանված ցուցանիշներով:

Միանվագ համալսարանական կրթաթոշակի հատկացման և հրամանագրման գործընթացը կազմակերպվում է սույն կանոնակարգի 20-րդ կետում նշված մանդատային հանձնաժողովների միջոցով և համապատասխան կարգով:

Յուրաքանչյուր կիսամյակ նշանակվող համալսարանական միանվագ կրթաթոշակների չափը, ընդհանուր քանակը և ֆակուլտետներին տրվող համամասնությունները սահմանվում են ԵՊՀ ԻՄ տնօրենի հրամանով:»

Արտահայտվեց – ԵՊՀ ԻՄ-ի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովի նախագահ Ա. Հովհաննիսյանը: Նա նշեց, որ առաջարկվող փոփոխությունները չեն հակասում ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրությանը և ԵՊՀ ԻՄ-ում գործող մյուս իրավական ակտերին:

Որոշեցին

Որոշում 19/4

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի

պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգում» (հաստատված ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի **2016թ. ապրիլի 2-ի թիվ 15 նիստում**) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1.1. Ուժը կորցրած ճանաչել Կանոնակարգի 11.6-րդ կետը:

1.2. Կանոնակարգը լրացնել 36-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

«36. Երևանի պետական համալսարանն իր ֆինանսական միջոցների հաշվին յուրաքանչյուր կիսամյակ սահմանում է միանվագ համալսարանական կրթաթոշակ:

Միանվագ համալսարանական կրթաթոշակը նշանակվում է բակալավրիատի և մագիստրատուրայի առավել բարձր առաջադիմություն (ՄՈԳ-ը բակալավրիատում բարձր է 18.00-ից, մագիստրատուրայում՝ 19.00-ից) ունեցող և հասարակական ակտիվ դիրքորոշում ու պատշաճ վարքագիծ դրսևորած ուսանողներին: Հասարակական ակտիվ դիրքորոշումն ու պատշաճ վարքագիծը բնութագրվում է սույն կանոնակարգի 24-25-րդ կետերում սահմանված ցուցանիշներով:

Միանվագ համալսարանական կրթաթոշակի հատկացման և հրամանագրման գործընթացը կազմակերպվում է սույն կանոնակարգի 20-րդ կետում նշված մանդատային հանձնաժողովների միջոցով և համապատասխան կարգով:

Յուրաքանչյուր կիսամյակ նշանակվող համալսարանական միանվագ կրթաթոշակների չափը, ընդհանուր քանակը և ֆակուլտետներին տրվող համամասնությունները սահմանվում են ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի հրամանով:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

<u>Օրակարգի հինգերորդ՝</u> ԵՊՀ ԻՄ-ի դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականության հաստատումը հարցի վերաբերյալ լսեցին տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Նա նշեց, որ քաղաքականությունը կազմվել է ԵՊՀ ԻՄ-ի ԿՈԱԳ բաժնի աշխատակիցների կողմից: «ԵՊՀ ԻՄ-ի դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն»-ը ուսումնասիրել և իր դրական եզրակացությունն է տվել նաև ԵՊՀ ԻՄ-ի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովը:

Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ դասավանդման և ուսումնառության մեթոդների ճիշտ ընտրությունն ուսուցման գործընթացի արդյունավետությունն ապահովող կարևոր ուղիներից է, հետևաբար մասնագիտական և ընդհանրական կոմպետենցիաներով օժտված անձ ձևավորելու - նպատակին անհրաժեշտ է ծառայեցնել ուսուցման բազմազան ձևեր, մեթոդներ և միջոցներ, ընդ որում դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության ոլորտում ԵՊՀ ԻՄ-ի քաղաքականությունը համահունչ է ՀՀ կրթության զարգացման պետական ծրագրին և մասնաճյուղի զարգացման ռազմավարական ծրագրի խնդիրներին: Քաղաքականության հիմքում ընկած է մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության ակադեմիական ազատության սկզբունքը՝ հիմնված կրթական ծրագրի և դասընթացների ուսումնառության ելքային արդյունքների ձևավորումը ապահովող համապատասխան մոտեցումների ու մեթոդների կիրառման միջոցով: Նա նշեց, որ սույն փաստաթղթով սահմանվում են ԵՊՀ ԻՄ-ի դասավանդման և ուսումնառության

մեթոդների ընտրության քաղաքականությունը, նպատակները, խնդիրները և իրականացման սկզբունքները:

Արտահայտվեց – ԵՊՀ ԻՄ-ի ԿՈԱԳ բաժնի վարիչ Մ. Ճաղարյանը: Նշվեց, որ սույն քաղաքականության դրույթները համահավաք կերպով արտացոլվելով դասընթացների փաթեթներում (պորտֆոլիոներում)՝ իրականացնում են մասնաճյուղում դասավանդող դասախոսները, իսկ գործ-ընթացի անմիջական վերահսկողությունը կատարվում է մասնագիտական ամբիոնի վարիչի և մասնագիտության կրթական ծրագրերի ղեկավարների կողմից:

Նա նշեց որ ‹‹ԵՊՀ ԻՄ-ի դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն››-ն նախնական տարբերակը քննարկվել է ԵՊՀ ԻՄ-ի բոլոր դեկանների, ամբիոնի վարիչների և կրթական ծրագրերի ղեկավարների հետ, այնուհետ նրաց առաջարկների հետ միասին քննարկվել է ԵՊՀ ԻՄ-ի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովում:

Որոշեցին

Որոշում 19/5

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականությունը՝ համաձայն հավելված 4-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ընթացիկ հարցեր

Լսեցին - ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ, մ.գ.թ. Վաչիկ Բրուտյանի «Իրավաբանական մանկավարժությունը Հայաստանի Հանրապետության իրավապահպան համակարգում» մենագրությունը հրատարակության երաշխավորելու մասին ԵՊՀ ԻՄ-ի գիտքարտուղար Մ. Ս. Աթոյանի հաղորդումը:

Մ. Աթոյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի մանկավարժության և հոգեբանության ամբիոնը դիմել է ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ, մ.գ.թ. Վաչիկ Բրուտյանի «Իրավաբանական մանկավարժությունը Հայաստանի Հանրապետության իրավապահպան համակարգում» մենագրությունը հրատարակության երաշխավորելու համար: Ձեռնարկը գրված է հայոց լեզվով, ունի գիտագործնական նշանակություն և իր հարցադրումների բնույթով նորույթ է հետազոտվող հիմնախնդրի ուսումնասիրության ոլորտում:

Ներկայացված մենագրության գրախոսներն են իրավաբանակն գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ. Մ. Դերձյանը, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Ս. Սողոյանը, իսկ գիտական խմբագիրն է մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ. Հ. Պետրոսյանը:

Արտահայտվեցին – Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Ներսիսյանը:

Պրոֆեսոր Ա. Ներսիսյանը նշեց, որ մենագրության մեջ հանգամանորեն քննարկվում են մանկավարժության և իրավապահպան գործունեության

համակցության խնդիրները, իրավաբանական մանկավարժության՝ որպես մանկավարժության գիտաճյուղի առանձնահատկությունները, իրավական նիհիլիզմի հաղթահարման միջոցները, ինչպես նաև բարձրագույն իրավաբանական կրթության հիմնախնդիրները: Մենագրությունը կարող է օգտակար լինել իրավաբանական բուհերի և ֆակուլտետների ուսանողների, դասախոսների, ինչպես նաև մանկավարժության տեսության հարցերով զբաղվող լայն շրջանակների համար:

Որոշեցին

Որոշում 19/6

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 13-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

Երաշխավորել հրատարակության ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ, մ.գ.թ. Վաչիկ Բրուտյանի «Իրավաբանական մանկավարժությունը Հայաստանի Հանրապետության իրավապահպան համակարգում» մենագրությունը:

Գիտական խորհրդի նախագահ_____Ս. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար_____Մ.Ս. ԱԹՈՅԱՆ